փազյան էր իր գրքերում միավորում արեւելահայերենն ու արեւմտահայերենը՝ արդյունքը շքեղ էր ու տպավորիչ, բայց երբ արեւելահայ արվեստագետ Գեորգ Աբաջյանն էր իր գրավոր ու բանավոր խոսքում փորձում մերձենալ արեւմտահայերենին՝ տպավորությունը կարկատանալի էր, անքնական, վանող: Ուստի գրականության լեզվի ուղղվածության հարցը շատ բաներով պայմանավորված է գրողի անհատականությամբ:

Այս տեսադաշտում շատ տեղին են գրականության լեզվական ուսումնասիրությունները, ինչպես օրինակ՝ Վարագ Առաքելյանի հոդվածը՝ նվիրված «Արեւելի գաղափարներ» պոեմի ոճական առանձնահատկություններին (տե՛ս ՍԳ, 1963, թիվ 1): Ն. Չարյանն այն տեսակետն է հայտնում, թե «Մի ժամանակ մեր ազգային ավանդույթներին, մեր ազգային լեզվին թանկացած սնունդ էր տալիս գյուղը»: Այժմ քանի որ գյուղը մոտենում է քաղաքին, ուստի «մեր գրականության ու ազգային լեզվի զարգացման հիմքերը պետք է ուրուխդ մեծ մասամբ քաղաքներում» (ՍԳ, 1961, թիվ 10, էջ 9): Հիմքում այս դիրքորոշումն արհեստական է. ի՞նչ է նշանակում գյուղի լեզու, ի՞նչ է նշանակում քաղաքի լեզու, առաջինը բարբառն է, երկրորդը՝ կամ գրական հայերենը, կամ՝ ժողովրդախոսակցական հայերենը:

Մինչ այս հարցադրումները տեսական պատասխան էին որոնում, գերադասության ամենաբարձր մակարդակով, բայց տարբեր սկզբունքներով այն իրականացրեցին Մեծնոյը՝ «Արեւիկ...»-ով, Մ. Կասիրի՝ «... Այգեստաններ»-ով:

Գրական լեզու եւ գրականության լեզու հարցադրումները տարբեր են: Գրական հայերենն այս տարիներին դիմադարձ պայքարի մեջ էր ռուսականացվող հանրության դեմ, եւ անգամ այդ դիմադարձ պայքարի մեջ ձեւավորվեց մայրաքաղաքային հայերենի մի բարձր շերտ, որով միայն հնարավոր էր պայքարել ռուսականացման դեմ: Բայց գրականության լեզուն արդեն միակամայն այլ խոսակցության նյութ է: Ի վերջո, գրողն ինքնուրույն լեզուն է եւ ոճը, ու ստեղծեց՝ ստեղծեց, ով չէ՛ կորած է: Իսկ իրենց գրականության լեզուն, իրենց ոճը ստեղծեցին միայն նշանավորները, մյուսները մնացին նմանակողներ:

Շարունակությունը՝ էջ 6

ՉԱՔԱՐԻԱ ՎԱՐՈՒՊԵՏ ԲԱՐՈՒՄՅԱՆԻ ԲԱՐՈՂԸ...

Սկիզբը՝ էջ 4

Հետեւաբար, քրիստոնեական տեսանկյունից, սերը ոչ միայն համոզյ է, այլ առավել եւս՝ պատասխանատվություն, նվիրում եւ անձնագործություն: Ս. Հակոբոս առաքյալն ասում է. «Հավատքն առանց գործերի մեռած է» (Հակ. Բ 26): Նույնն է սիրո դեպքում. սերը մեռած է դատարի է, եթե չկան այդ սերը ցույց տվող գործեր եւ արարքներ: Ամեն օր պետք է մեր սերն ապացուցեց Տիրոջ, մեր հայրենիքի եւ փրկելի հանդեպ: Զանգի սերը ոչ թե խոսք է, այլ ամենօրյա գործողություն եւ քայլ, որի

պահանջն ունեն բոլորը: Երբ սիրում ես մեկին, նաեւ պատասխանատվություն ես գտնում նրա հանդեպ: Սիրել նշանակում է նաեւ պատրաստ լինել ինքնագործություն՝ անձնական եւ-ը մեք-ի վերաբերյալ, փորձելով հասկանալ դիմացիին, ամեն ինչ հարթելով միայն սիրո ամուր եւ հաստատուն հիմքի միջոցով: Չպետք է մոռանալ, որ սիրո եւ ընտանեկան երջանկության համար պատասխանատու են երկու կողմերն էլ: Ուստի ամեն ինչ արե՛ք ամբողջապես երջանիկ լինելու համար, որի բանալին ձեր ձեռքերում է:

Ս. Սարգսի տոնի օրը նվիրական է նաեւ, քանզի տարիներ առաջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրելի Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այն հռչակվել է իբրեւ Տրիտասարդների օրհնության օր: Ուրախ եմ, որ այսօր մեր եկեղեցին լի է երիտասարդներով, ովքեր եկեղեցի են գալիս ոչ թե ավանդույթի ուժով, այլ գիտակցաբար՝ հաղորդ դառնալով մեր նախնայաց հավատքին: Սիրելի՛ երիտասարդներ, դուք ոչ միայն մեր եկեղեցու ապագան եք, այլեւ ներկան, որ այս փոփոխական եւ ժամանակակից տեխնոլոգիաների հորձանու-

տում փորձում եք մշտամա արժեքների հետեւել, հոգեւոր կյանքով ապրել եւ ձեր ներկայությամբ կենդանի պահել մեր եկեղեցին:

Ի խորոց սրտի ջերմագին աղոթքս է, որ ամենակարող Աստված ս. Սարգսի բարեխոսությամբ ապահով եւ անսպառ պահի ամենքիդ, որ օր առաջ գտնեք ձեր սերունդները՝ առավել զորացնեք եւ պտղաբեր դարձնեք:

Տիրոջ սերը, ողորմությունը եւ Ս. Էջմիածնի օրհնությունն ամենքիդ հետ լինեն. ամեն:

Չորավար Անդրանիկի կյանքի եւ գործունեության էջերը պաշտելի են հայոց բոլոր սերունդների համար: Չորավարի հայրենասիրական անշնչ ոգին, բարձր անունն ու ջինջ փառքը ոգեշնչել են հայ մեծանուն արվեստագետներին, գրողներին ու բանաստեղծներին:

Քասեհերոցի դարի հայ մեծանուն բանաստեղծուհին՝ Սիլվա Կապուտիկյանը, նույնպես անդրանիկապաշտ սերնդի ներկայացուցիչների առաջին շարքերում էր:

Արմատներով վանեցի բանաստեղծուհին խորապես ապրել, այրվել ու ազդվել է հայկական ազատամարտի հերոսներով, նրանց հաղթ ու ոգեշնչել կերպարներով:

Ինքը՝ Անդրանիկ Չորավարը, քանի՞ քանի՞ անգամ անհավասար, սակայն խիզախ ու ասպետական կռիվներ է մղել Վան-Վասպուրականում, իսկ 1915 թ., հայ կամավորականների գնդի գլուխ անցած, օգնության է հասել ամեն կողմից պաշարված Վան քաղաքին:

Սիլվա Կապուտիկյանը Չորավարի մասին առաջին գրառումներն արել է 1964 թվականին Երեւանում հրատարակված «Քարավանները դեռ քայլում են» գրքում: Այն ժամանակ բանաստեղծուհին, ավարտելով իր բեյութային ուղեւորությունը, ընդամենը երկու օրով կանգ է առել Փարիզում եւ այցելել Պեր Լաշեզ գերեզմանատանը գտնվող Չորավարի շիրմին: Ըստ բանաստեղծուհու՝ տպավորիչ էր Պեր Լաշեզի հանրահայտ գերեզմանատունն իր բազմազան, խորախորհուրդ շիրմաքարերով, որոնց տակ հանգում էին Ֆրանսիայի նշանավոր գավակները: Ընդհանուր մի հայացքով անցնելով այս բոլորի մոտով՝ բանաստեղծուհին երկար կանգնում է ուրիշ մահաբանների մեջ խճուղած մի շիրմի առաջ: «Քրախիտ պատվանդան, գրախիտ ծի՜ վրան հայկական արժեքներով, երկար բեկորով ու բարձր փափախով հեծյալը: Չորավար Անդրանիկն էր...»:

Բանաստեղծուհին համոզված պնդում է, որ այդ արձանն ամենեին չէր համապատասխանում բոլոր ժամանակների հայ մեծանուն Չորավարի ոգուն եւ բազկի սխրանքի վեհությանն ու վիթխարիությանը: «Փոքրիկ, վրված, անարյուն մի ծի է: Հեծյալը, թերեւս արտաքսական նման, սակայն չունի իր մեջ իրենէն այն խորհուրդը, որ «Անդրանիկ» անելին վրնջում, բաշերը թափ է տալիս ամեն հայի հոգում եւ Սասնա լճույզի պես դուրս է տուրում քարանձավից»: Ըստ բանաստեղծուհու ներքին համոզմունքի՝ Չորավարի փարի-

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՅԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՉՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

(Չորավար Անդրանիկի ծննդյան 150-ամյակի առթիվ)



Թողած իր պաշտելի Հայաստանը, նրա անխորհուրդ վարիչներից խռոված, նա թափառեց աշխարհում վիրավոր ու հիասթափ, որպես մի Լիր արքա... Այստեղ՝ Ամերիկայում, հեռու, իր հետ կապ չունեցող աշխարհում է վերջ ի վերջո հանգրվանել այդ անհանգիստ հոգին, մինչ հեռվում իր Հայաստանն էր, իր ժողովուրդը, որի փրկության համար տվել էր ամեն ինչ՝ սիրտ, երգած, երիտասարդություն, կռվել ու կռվել էր տարել իր քաջերին, նետվել դեպի մահ, հաղթանակել, պարտվել, այրվել ու ընդվզել»:

Այս տողերի մեջ ընդգրկված է Անդրանիկի համակ կերպարը, տրված է նրա կյանքի եւ գործունեության համապարփակ ու սպառիչ բնութագրերը:

Բանաստեղծուհին նրբին դիտարկումներով բացահայտում է Չորավարի ապրած ողբերգության ու ցավի ողջ դրամատիզմը օտար երկրներում, օտար երկրների ինքը. «Եվ այդ արյունից հետո՜ այս Կալիֆոռնիան, այս հաշտ ու առտնիկ ազատականները, այս քաղցեմի հանգստավետությունը: Այնպես անհարի՜ր էր այս ամենին ինքը, իր եղբայրները, իր գոռ ասպազները»:

Եվ միայն Սիլվա Կապուտիկյան բանաստեղծուհու զգայուն հոգին կարող էր նկատել եւ արձանագրել, որ ամենայն հայոց Չորավարը մեռավ ոչ միայն Հայաստանից, այլեւ իր «...տնից էլ, Ֆրեզկոյից ու նրա հայրենությունից էլ հեռու... իր կնոջ՝ Նվարդի սիրով ու հուսահատ հայացքի տակ: Եվ սակայն հուղարկավորությունը եղավ հիբարդի համաժողովրդական»:

Հեռակա երկխոսություն սկսելով Չորավարի հետ, խոսելով ոչ միայն իր, այլեւ հայ սերունդների անունից՝ բանաստեղծուհին մտորում է այն բանի շուրջ, որ եթե իմանար փարիզյան «խաղաղիկ շիրմատանը ննջող մեծ Չորավարի հոգին, եթե իմանային մեր ներկա սերունդները, եթե Հայաստանի ծաղիկ հայ որբերը, եթե Արարատի շուրջ տակ, բայց, այնուամենայնիվ մեծացած այլ մթնոլորտում, այդ ստեղծագործ, ժրջան ու աշխատող որբերը ինչքան հոգի ու շանթ թափեցին, որպեսզի բերեն, Արարատի շուրջ տակ բնակեցնեն նաեւ իրենց փր-

կարարին ու հայրենիքում հնչեցնեն Անդրանիկ անունը»:

Ս. Կապուտիկյանը երախտագիտությամբ հիշում է հնչեցնում է այն մտավորականների եւ կուսակցական ղեկավարների անունները (Յակով Չարքայան, Հրաչյա Քոչար, Սերո հակազարյան, Ջոն Կիրակոսյան, Գեորգ Դարիբջանյան, Հովհան-Նես Շիրազ, Շատուր Աղայան եւ ուրիշներ), որոնց ջանքերով հորհրդային Հայաստանում, թելուգել մասնակիրներ, ոչ լիաբերան, նշվեց Չորավարի ծննդյան 100-ամյակը, իսկ խիզախ պատմաբանները կարողացան ժխտումի ու բացառումի թանձր շերտերի տակից հանել եւ թղթին հանձնել Անդրանիկի կյանքի եւ գործունեության հերոսական էջերը՝ որպես գիրք ու հոգված: Բանաստեղծուհու պատկերավոր համեմատությամբ՝ Անդրանիկ իր սերնդի Շուշին էր. «Մենք էլ, մեր սերունդներն էլ ունեցել ենք մեր Շուշին, ունեցել ենք մեր պայքարը ընդդեմ տիրող ազգամերժ գաղափարների, վերից իջնող կաշկանդի որոշումների ու հրահանգների, ՊԿԿ ու զրաքննություն կոչվող հաստատությունների՝ ամենուր ձեռքիդ ու ոտքիդ խճճվող սարդոստային: Անդրանիկը մեր Շուշին էր, որին նյարդերի մեծազանց պրկումով ու հաճախանքի հասնող մտաբեռնումով տարեցտարի, օրեօր, քայլ առ քայլ ազատագրում էինք ու վերջապես ազատագրեցինք արգելափակվածներին»:

Սա բանաստեղծուհուս հրաշալի գյուտ է, Անդրանիկի կերպարի վեհությունը խտացնող ու ամփոփող լավագույն բնութագրերը:

Իր մահից 73 տարի անց Չորավարը վերադարձավ հայրենիք. մի իրադարձություն, որին այնպես սպասում էին սերունդները: Բանաստեղծուհին այդ առիթով ասում է, որ Անդրանիկ՝ հայրենիք վերադարձի մեջ անցնող սերունդների բաժինն էլ կա, մեր վախերն ու տագնապները կան: Զանգի տարիներ շարունակ մենք սպասել ենք նրա վերադարձին, մեր մտքերում նրա համար փնտրել-չոկել ենք մեր հողի ամենալավ անկյունը, ամենաբարձր գագաթը, ամենագեղեցիկ հրապարակը»:

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 5

1960-ականներին եղավ մի պահ, երբ Կենտկոմը վերստին ընկավ գրական լուրջ արժեքների ետեմից: ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական ոլորտում Լեոն Արիսյանի նմանակները հարություն էին առել, եւ հիմա նրանցից մեկը կոչվում էր Գեորգ Տեր-Ղազարյանց, ով 1961-ից ստանձնեց ՀԿԿ Կենտկոմի բարտուղարի պարտականությունները:

Որոշում ընդունվեց Հրատարակչության միջոցով: Անստորագիր հոգված տպագրվեց հաջիկ Ղաշտեցի բանաստեղծությունների դեմ (ՍԳ, 1962, թիվ 12): Զննադատվեց «Սովետական գրականություն» ամսագիրը, որտեղ գետնոված էր Ղաշտեցի լավագույն գործերից մեկը՝ «Իմ ուղին»: Մեր առջեւ հայրենի հողի գործության գիտակցող եւ ճշմարիտ պարած բանաստեղծն է (ՍԳ, 1962, թիվ 12):

Հայարտ անցա իմ ուղին՝
Ձեր շարքերին խորթացած,
Պաշտամունքի խորանին
Ոչ մի պատրույզ չկառած:
Եթե որոշ տողերդ
Մի քիչ տաք ճարպ է ծորել,
Այդ էլ ես չեմ մեղավոր,
Խմբավորներս ես արել:
Ու գլուխ եմ այն օրից՝
Ողջս ամուր մեր հողին,

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵԿ

Եվ ճակատս արեւոտ,
Եվ հայացքը իմ ուղիդ:
Իմ թիկունքին ես չունեմ
Քննադատներ պահապան,
Անաղմուկ է իմ կյանքը,
Անսովոր է իմ ճամփան:
Տարիներով լուռ եմ՝
Երբեմն հուզված ու տխուր,
Չեմ շտապում ամեն տեղ
Ու չեմ բախում ամեն դուռ:
Փոխք չե, կերթամ ես առաջ՝
Կապված իմ մեծ մայր հողին,
Զանգի այդ է ճշմարիտ
Բանաստեղծի սուրբ ուղին:

Եվ տեսեք, թե ի՞նչ սուր դիրք է գալիս հարվածը: Նկատի ունենալով առաջին տունը եւ երկրորդ տողում «Ձեր» բառի արդեւ ընելով ռուսական հարցական՝ հոգվածագիրը շարունակում է: «Անձի պաշտամունքին սուկ տուրեք չտալը դեռես մի այնպիսի հերոսություն չէ, որի համար նա պարծենա»: Իսկ ժամանակն ասում է՝ մեծ հերոսություն է, եւ այդտեղ է պաշտամունքը իսկարկածների ստորաբարձրությունը տարածել բոլորի վրա: Նախալեզքին տակ կապակցությամբ գրում է. «Լեռն: Ահա թե



Հովհաննես Շիրազ

ինչով է հպարտանում բանաստեղծը: <...>: Ըստ ընկ. Ղաշտեցի՝ դուրս է գալիս, որ բանաստեղծի սուրբ ուղին այդ իրականությունից երկնաշարք խուսափելն է, ժամանակի կարեւոր հարցերի մոտով լուրջությամբ անցնելը...»: Հոգվածագիր այս կատարյալ անըմբռնողությունն ա-վարտվում է այսպիսի բարոյախ-

րատական առաջարկությամբ. «Բանաստեղծի ձեր ուղին սխալ է, դատապարտելի, հրաժարվեք այդ ուղից»:

Նույն կերպ քննադատվում է հավիտենորեն թույլ ու անուր Սարմենի եզակի մի լավ բանաստեղծությունը՝ «Չղջուկ» («Երեւան», 1963, 3 փետրվար), որի մեջ կան այսպիսի տողեր.

Շատ եմ ճնացել, խնկարկել
Եմ շատ,
Ճափ տալուց է այս ձեռքս
կշտացել,
Երբ պետք էր լինել
որոտմունք ու շանթ,
Չոկեր եմ բաշխել ես
առատաձեռն:

Անանուն հեղինակը հույս է հայտնում, որ Սարմենը զուցե «մի օր զոջա» «Չղջուկ» համար: Եվ այսպես՝ ԽՍՀՄ 20-րդ համագումարում անհատի պաշտամունքը քննադատելուց անմիջապես հետո:

1960 ականների գեղարվեստական զարգացման ճանապարհին առանձնահատուկ են Սուրեն Աղաբաբյանի «Ժամանակն էլ պոեզիան» հոդվածաշարը (Ս. Աղաբաբյան, «Պոեզիան եւ ժամանակը», ԳԹ 1965, թիվ 8, 10, 12, 14, 18, 19 փետրվար, 5, 19 մարտ, 2, 30 ապրիլ) եւ ապա Վահագն Դավթյանի սկսած եւ Պարույր Սեակի շարունակված խոսակցությունը «Զեյնիդիմի նախահիմքերի» շուրջ (տե՛ս ԳԹ, 1965, թիվ 52, 24 դեկտեմբեր, 1966, թիվ 2, 4, 5, 7, 9, 16-17, 7, 21, 28 հունվար, 10, 24 փետրվար, 15, 22 ապրիլ):

Շարունակելի
Հայրիկ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Մեր օրերում առանձնահատուկ կարեւորություն է ստացել Հայաստանում ինտելեկտուալ եւ մշակութային աշխատանքի գնահատման հարցը: Աշխարհի քաղաքակիրթ երկրներում (հիմնականում դրանք արեւմտյան երկրներն են) այդ հարցը դեռեւս մի քանի տասնամյակ առաջ դրական լուծում է ստացել: Սրա ապացույցն այն է, որ մեր օրերում Եվրոպայի, Կառնաթի եւ Միացյալ Նահանգների գիտնականները եւ մշակութային գործիչները հասարակության եւ իրենց պետությունների կողմից բավականին գնահատված են եւ ապահովված առնվազն նվազագույն կենսապայմաններով՝ իրենց գործունեությունն արդյունավետորեն իրականացնելու համար: Եվ պատահական չէ, որ ներկայիս արեւմտյան երկրների մի զգալի մասում գիտատեխնիկական առաջընթացը բավականին բարձր մակարդակի վրա է, իսկ եվրոպական որոշ երկրներում ըստ արժանաւորյալ գնահատման են նաեւ մշակույթի գործիչները: Ցավով պետք է նշել, որ աշխարհի պետությունների գերակշռող մասում գիտնականները եւ մշակութային գործունեության մեջ ներգրավված մարդիկ երկրորդ, եթե չասենք՝ երրորդ, պլանի վրա են գտնվում: Նրանց գործնականում անտեսված են իրենց պետությունների եւ, ինչն ավելի ցավալի է, հասարակության կողմից: Մի՞թե սա նշանակում է, որ աշխարհի մի շարք երկրներին, այդ թվում՝ մեր երկրին, այլեւս պետք չէ ոչ մշակույթ եւ ոչ էլ ֆուկուսային գիտություն: Հավանաբար՝ այո: Եթե պետությունը եւ հասարակության մի զգալի մասը համարում են, որ բարձր մշակույթը եւ գիտությունը սոսկ ավելորդ բեռ են իրենց համար, ուրեմն այդ երկրում, ըստ երեւոյթին, մեր երկրում գոյություն չունենալու չունեն: Բայց մի պահ պատկերացնենք, թե մարդկությունը տակավին հազարամյակներ առաջ առաջնորդվել ասյ տարօրինակ մտածելակերպով՝ այդ դեպքում գոյություն չէին ունենալ ակտիվ կուլտուրան, Վերածնության դարաշրջանի փառահեղ մշակույթը, իսկ Լուսավորության շրջանի հանճարեղ մտածողները հնարավորություններ էին ունենալ հարստացնելու մարդկության հոգեւոր-գաղափարական ներշնչարիքը: Եթե եվրոպական պետությունները եւ Ռուսաստանը

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՐ ԶԱՅԱՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ



XIX դ. ճշշեին գիտական միտքը եւ բարոյագէտ ու հոգեբանորեն ընկճեին արվեստագետներին, ապա մարդկությունը, անշուշտ, մեծագույն կորուստ կունենար: Մենք՝ հայերս, հաճախ ենք քննադատում Եվրոպայի՝ վկայակոչելով այնտեղ առկա մի քանի արաւովոր երեւոյթները, բայց մոռանում ենք մատնաշէլ այն լավ ու դրականը, որ եղել են եւ կան այդ տարածաշրջանում: Մի պահ հիշենք Վերածնության դարաշրջանի Եվրոպան. Եվրոպացի ազգականները եւ մեծահարուստները մեծ ակնածանքով եւ անհատույց հովանավորում էին թե՛ գիտնականներին եւ թե՛ արվեստագետներին: Ակնհայտ էր, որ այդ սելենասները ոչ մի շահ չէին ակնկալում իրենց հովանավորւոյալներին, քանզի միակ բանը, ինչ այդ տաղանդավոր եւ հանճարեղ մարդիկ կարող էին տալ, լոկ իրենց արվեստի գործերն էին եւ գիտական հայտնագործությունները: Ասվածից հետեւն էլ թույլ տանք մի քանի դարեր առաջ ապրած Եվրոպացի մեծահարուստներն ու ազնվականներն այնքան էին գաղափարապէս հասունացել, որ գիտակցել էին բարձր մշակույթի եւ գիտության կարեւորությունը մարդկության համար: Որքան էլ տարօրինակ թվա, Միացյալ Նահանգներում վերաբերմունքը ֆուկուսային գիտության եւ մշակույթի հանդէպ այնքան էլ բարեհաճ չէր: Չուր չէ, որ ասում են, թե Ամերիկայի չոր պարագմատիզմի երկիր է, որտեղ վե՛ն մշակույթը երկրորդ

պլանի վրա է, իսկ գիտությունն ամերիկացիներին հետաքրքրում է միայն այն ժամանակ, եթե այն զուտ գործնական է եւ կարող է կարճ ժամանակում շահույթ բերել: Բայց եւ այնպէս, Նույնիսկ Միացյալ Նահանգներում XX դ. երկրորդ կեսում եւ XXI դ. վերաբերմունքը հոգեւոր ոլորտի նկատմամբ փոքր-ինչ փոխվեց դեպի լավ: Սրա ապացույցն այն է, որ որոշ գրողներ, իրատարակելով ընդամենը մեկ հաջողված գրական երկ (ինչպէս իրենք՝ ամերիկացիներն են ասում՝ «բեքստեր»), հաշված օրերի կամ շաբաթների ընթացքում համաշխարհային համբավ են ձեռք բերել, ավելին՝ որոշակի նյութական կարողության տեր են դարձել: Բերենք մի քանի օրինակ. Ստեֆան Մայերի «Մթնշաղ» վիպաշարը, Նիկոլաս Սիմարթի «Լոթատեր» գրվածքը, Դեն Բրաւսի «Դա Վինչիի ծածկագիրը» վեպը եւ այլն: Շարունակելով թեման՝ նշենք, որ այդ Նույն պարագմատիկ Ամերիկայում հատորներով գրականագիտական գրքեր են հրատարակվում, որոնք օրելի տիվորեն ոչ մի ուրը ֆինանսական շահույթ բերել չեն կարող: Փաստորեն՝ Նույնիսկ պրագմատիկ ամերիկացիները հասկացել են, որ չի կարելի ամեն ինչ չափել փողով, եւ որ հոգեւոր ոլորտը պետք է հովանավորվի, անկախ այն բանից՝ դա ֆինանսական շահույթ բերո՞ւմ է, թե՛ ոչ: Այստեղ շատերն անկասկած կանեն, որ ԱՄՆ-ը, ի տարբերություն Հայաստանի նման երկրների, մեծ ու

հարուստ երկիր է եւ կարող է իրեն թույլ տալ հովանավորել ֆուկուսային գիտությունն ու մշակույթը: Սակայն եթե մենք՝ հայերս, ասվածը մեզ համար արդարացում դարձնենք եւ քայլեր չձեռնարկենք գիտությունն ու մշակույթը խրախուսելու ուղղությամբ, ապա շուտով մենք կկորցնենք մեր երեք հազար տարվա քաղաքակրթությունը, որով մենք հաճախ հպարտանում ենք: Այսպիսով մենք կհավասարվենք արեւելյան որոշ հետամնաց ազգերին եւ աֆրիկյան ժողովուրդներին: Մի՞թե մեր պետական վերահսկվող եւ հասարակությունը սրան են ձգտում: Ինչե՛ն, դիտելով արդի կյանքը՝ ակամայից մտածում ես, որ մեր պետության ու հասարակությանը իրականում պետք չէն ոչ Գիտությունների ազգային ակադեմիան, ոչ գրադարաններ, ոչ պետական թատրոնը, ոչ ֆիլիարմոնիան եւ ոչ էլ թանգարաններ: Փաստորեն՝ ստացվում է, որ համեմատաբար երիտասարդ քաղաքակրթություն ունեցող Հյուսիսային եւ Կենտրոնական Եվրոպայի երկրներում եւ լոկ 238 տարվա պատմություն ունեցող ԱՄՆ-ում գիտական ու մշակութային աշխարհներն ավելի պահանջված են եւ գնահատված, քան երեք հազար տարվա քաղաքակրթություն ներկայացնող Հայաստանում: Ասվածից հետեւն էլ, որ մեր ազգը վերջին շրջանում հոգեպէս սնանկացել է, եթե չասենք՝ դեգրադացվել: Եթե մենք օր առաջ չգիտակցենք, որ սիսակ ուղու վրա ենք եւ չարժեւորել հոգեւոր կյանքը, ապա մենք կստանանք ամերիկացիների նմանակները, Մոգամբիկ, Չամբայի կամ էլ Եթովպիայի բնակիչներին: Եթե մեր պետության եւ հասարակության մեծամասնության ցանկությունն սա է, թող այսպէս էլ լինի: Եվ որքան էլ մի քանի տասնակի հայ մտավորական ջանա համուրդել հայ ժողովրդին, որ իր ներկայիս մտածելակերպը սիսակ է ու կործանարար, դժվար թե՛ այդ իրողությունը հասնեն իրենց նպատակակետին:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Սկիզբ՝ էջ 3

Այս մոտեցումը Հայոց ցեղասպանության եւ առհասարակ ամեն տեսակի բռնության դատապարտման նոր լեզվամտածողության ստեղծմանն է ուղղված, որի կարիքն այնքան սուր ձեռով զգացվում է այսօրվա մշակութային, որտեղ գերիշխում են վախն ու անորոշությունը, քանզի չկա ճշմարտություն, այլ կան ճշմարտություններ, ինչպէս Ալբեր Զաւուն է նկատում:

Նկարիչը տուրք չի տվել ականդական մտածողությանը, այստեղ չեն կիրառված այնպիսի տեսարաններ, որոնք ուղղակի կներկայացնեին ճոճի պատկերներ, կամ չենք հանդիպում կրոնական խորհրդանշանների, որոնք կբացահայտեին նկարի բովանդակությունը:



վանդակությունը, եւ շէշտը դրել է ոչ թե իրողության արտաքին կողմի վրա, այլ մետաֆիզիկականի՝ իր համար գերակա նպատակ դարձնելով ստեղծել այն միջավայրը, որը հնարավորություն է տալիս անմիջական հաղորդակցության մեջ մտնելու պատմության հետ, ապրելու այն, դառնալու նրա մի մասը: Այս նկատի ունեւ հետցդապակության սերնդի գրող Կոստան Չալոյանը, երբ ասում էր. «Պատմությունը գիշեր է, այլ ոգու պատմություն»:

Գ. Եղիազարյանի կտավի գեղարվեստական արժեքն իր պարզության մեջ է, այն Հայոց ցեղասպանության թեմայով ստեղծված առաջին սրբապատկերը կարելի է համարել, որը կերպարների եւ գույների համադրությամբ՝ նոր ավանդույթների ձեւավորման սկիզբն է ազդարարում համաշխարհային սրբապատկերային մտածողության մեջ:

Իբրեւ ամփոփում՝ նշենք, որ հեղինակի կտավը մեզ հիշեցնում է Նշանավոր գրող Ռիչարդ Բախի «Ջոնաթան Լիվինգսթոն ճայը» վիպակի փիլիսոփայությունը. ինչպէս Լիվինգսթոն ճայն էր յուրաքանչյուր նոր երկինք հայտնաբերելուց հետո հասկանում, որ կա որանից վեր մի այլ երկինք, եւ ծնում դրան, այնպէս էլ Գեալի կտավն ամեն անգամ նայելիս նոր երկինք է բացահայտվում դիտողի համար: Նկարիչը կարողացել է ապահովել այն ներքին ձգողականությունը, որը հետ կերպարանալու ցանկություն է առաջացնում նայողի մոտ, նոր երկինք հայտնաբերելու ձգտում:

Գեորգ Եպս ՄԱՐՈՒՅԱՆ
Վերստետսկ Մայր Վրոն
Սոցիալական
հոգեւոր-կրթական բարձրագույն
հաստատությունների,
տեսուչ Գեորգյան հոգեւոր
ճանապարհ

«Իմ հոգին գույգ հենարան ունի՝ Աստված եւ հայրենիք»



Հայ ժողովրդի բազմադարյա պատմության ընթացքում մեկ անգամ չէ, որ հայ հոգեւորականն ապացուցել է իր ազգակները գործունեության անհրաժեշտությունը, հավատի ուժն ու գործությունը: Այսօր իրավիճակը գրեթե չի փոխվել: Սահմանին կանգնած յուրաքանչյուր գիվոր արդեթով է դիմադրում լուսաբացը՝ արդեթով անցկացնում գիշերը՝ գեղն ուսին, հավատը՝ սրտում:

Չինվորական ծառայությունից գրեթե

ոչնչով չի տարբերվում հոգեւոր ծառայությունը: Մի դեպքում ուժը գեղն է, մյուսի դեպքում՝ հավատը: Իսկ երկուսը մեկում՝ կրկնակի ուժ է՝ հզոր ու անապրտելի: Հենց այս առաքելությամբ են այսօր հոգեւորականները գորաւաստելում մատուցում իրենց հոգեւոր ծառայությունը՝ ծառայությունը հայրենիքին, ի դեպ՝ մեծ սիրով ու պարտաւսականութեամբ: Հոգեւոր սպասավորն ամենօրյա աշխատանք է տանում գիվորների հետ՝ ոգեւորում եւ դաստիարակում նրան:

Հունվարի 28-ը զինծառայողների համար կրկնակի տոն էր. Տավիշի մարզի գորաւաստելից մեկում Հայոց բանակի 23-ամյակին նվիրված տոնական զինվորական շքերթից հետո տեղի ունեցան այդ գորաւասի հոգեւոր սպասավոր Սմբատ սրկ. Կանվելյանի հեղինակած «Իմ հոգին գույգ հենարան ունի՝ Աստված եւ հայրենիք» գրքուկի շնորհանդեսը եւ հայրենիքի սահմանների պաշտպանության համար զինծառայողների ծնողների կողմից կազմա-

կերպած մատաղօրինների արարողությունը: Ի դեպ՝ մատաղօրինների արարողությունը կատարվեց գինծառայողների ձեռնով կառուցված մատուռի մոտ:

Միջոցաւորան ընթացքում հեղինակը ներկայացրեց գրքուկի բովանդակությունը՝ նշելով, որ այն ստեղծվել է՝ մերժելու համար այն թյուր կարծիքը, թե Լճիեղը դեմ է եղել քրիստոնեւթանությանը: Հակառակը՝ Լճիեղն այսպէս է բնութագրվում քրիստոնեւթանութեամբ. «...ոգեշուն... եւ հենց այդ էլ պատճառը, որ նրա գիրկը նետուղներէն առաջինը եղավ հայը»: Իսկ առ Աստված ունեցած հավատի մասին հարկավարված մեջբերեց Լճիեղյան տողերը. «Վախը դարարում է, վրասնը տեղի տալիս, մահը մեռնում է՝ հենց որ մարդու որդին իր գիտակցության ամբողջ գործւթամբ կրկնում է. - Եւ էլ Աստծո որդի եմ»:

Շնորհանդէսի ավարտին Սմբատ սրկ. Կանվելյանը, խրախուսման կարգով, գրքուկը մեկնական օրինակ նվիրեց լավագույն գիվորներին:

Մուշէ ԱՐԱՍԱՐՅԱՆ

ԲԼԱՅԻԼ ԼՈՒԻՍ



Սկիզբը՝ 2014 թ. թիվ 3-6, 8-21, 23-24, 2015 թ. թիվ 1-2

Բրիտանացի հանրահայտ գրող Բլայվ Լուիսի վերոհիշյալ գործը քրիստոնեական թեմաներով երգիծական մի ստեղծագործություն է, որ ներկայացնում է հառնակիչ կոչվող դեպի Լազարի կողմից նրա գարմիկ Օշկոյի: «Խառնակիչ Լազարի» ստեղծագործությունը՝ որպես առանձին գիրք, առաջին անգամ հրատարակվել է 1942 թվականին:

Իմ

Մի սիրելի Օշկոյի, եղևում է՝ դու հիմա օգտակար շատ քիչ բան ես անում: Խնամարկյալիդ «սերը» գործածելը՝ նրա միտքը թշնամուց շեղելու համար, իհարկե, լավ է, բայց դու դա շատ վատ ես գործածում, եթե ասում ես, որ նրա չեղված ու ցրված մորի խնդիրը այժմ դարձել է նրա արդթի հիմնական առարկաներից մեկը: Սա նշանակում է՝ դու շատ ես ծախողել: Երբ այս կամ մեկ այլ բան շեղում է նրա միտքը, դու պետք է քաջալերես նրան, որ դա իրենից հեռացնի միայն կամքի ուժով և ջանա շարունակել սովորական արդթն այնպես, ասես ոչինչ չի պատահել: Բավական է՝ նա մտքի շեղումն ընդունի որպես իր ներկա խնդիր ես այն տարածի թշնամու առաջ՝ դարձնելով դա իր արդթների եւ ջանքերի հիմնական առարկան, դու բարիք գործելու փոխարեն վնաս գործած կլինես: Այն ամենը (ուղիսիսկ մեղքը), ինչն արդյունքում մարդուն մտքեցնում է թշնամուն, վերջում մեր դեմ է գործելու:

Խստուսամարից Լուիսը է վիճել հետեյալ ռազմավարությունը: Դիմա, երբ նա սիրահարված է, երկրային երջանկության մի տոր գաղափար է ծագել նրա մտքում, հետեաբար նաեւ՝ մի տոր արտակարգ իրադրություն նրա զուտ արդաչանական արդթներում՝ այս պատերազմի եւ Լազարիայի բաների մասին: Այժմ ժամանակն է, որ այդպիսի արդթի դեմ մտավոր դժվարություններ ստեղծես: Կեղծ հոգեւոր վիճակը միշտ պետք է քաջալերվի: Այն լացյալ պաշտպանության հողի վրա, թե՛ «Խառնաբանումս ու Լազարի հետ հաղորդակցությունն են ճշմարիտ արդթը», մարդիկ կարող են հաճախ խոտորեցվել դեպի ուղիղակի անհաղաճություն թշնամուն, ուր, իր սովորա-

ԽԱՌՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

կան տափակ, հասարակ ու անհետաքրքիր եղանակով, վճռականորեն թեյադրել է նրանց արդթել իրենց ամենօրյա հացի եւ իրենց հիվանդների բժշկության համար: Դու իհարկե կթաքցնես խնամարկյալիցդ այն փաստը, որ ամենօրյա հացի համար կատարվող արդթը, «հոգեւոր խնամուղի» մեկնաբանվելու դեպքում, իրականում Լուիսյան աղայական «անմշակ» բնույթ ունի, որքան եթե որեւէ այլ խնամուղի մեկնաբանվեր:

Բայց քանի որ խնամարկյալը համաձայնություն է կնքել հնազանդության ստապիեի սովորության հետ, նա հավանաբար կշարունակի այսպիսի «անմշակ» արդթները, ինչ էլ որ դու անես: Սակայն դու նրան կարող ես անհանգստացնել այն հետպակող կասկածով, թե այդպես արդթելն անստույգություն է եւ ոչ մի դրական արդյունք չի տալու: Մի՛ մոռացիր գործածել «ցանկացած դեպքում հաղթողը ես եմ լինելու» փաստարկը: Եթե չկատարվի այն, ինչի համար նա արդթում է, դա ես մեկ ապացույց կլինի, որ աղայական բնույթի արդթները չեն գործում: Իսկ եթե կատարվի, նա անշուշտ կկարողանա տեսնել այն ֆիզիկական պատճառներից մի քանիսը, որոնք հանգեցրին դրան, «հետեաբար դա ամեն դեպքում կկատարվեր», ուստի ընդունված արդթը կդառնա արդթների անարդյունավետության նույնքան լավ ապացույց, որքան մերժվածը:

Լինելով հոգի՝ դու կոժվարանա հասկանալ, թե նա ինչպես կարող է այսպիսի շփոթության մեջ ընկնել: Բայց դու միշտ պիտի հիշես, որ նա ժամանակը դիտում է որպես վերջնական իրականություն: Նա ենթադրում է, թե թշնամին, իր պես, որոշ բաներ ներկայում է տեսնում, որոշ բաներ անցյալից հիշում է ուրիշներ էլ, սպալալում սպասում, կամ էլ, եթե նա համոզված է, որ թշնամին այդպես չի տեսնում իրերը, միեւնոյն է, իր սրտի խորքում համարում է սա թշնամու ընկալման ձեւի իր յուրահատկություն: Նա իսկապես չի կարծում (թեւեւ կասի, թե կարծում է), թե իրեն այնպիսին են, ինչպիսին դրանք տեսնում է թշնամին: Եթե դու ջանաիր նրան բացատրել, որ մարդկանց արդթներն այսօր այն անթիվ կորդիկաներից մեկն են, որով թշնամին ներդաշնակեցնում է վաղվա եղանակը, նա կպատասխաներ, որ այդ դեպքում, ուրեմն, թշնամին միշտ գիտեր, որ մարդիկ պատրաստվում էին այդ արդթներին անել, եւ եթե այդպես է, նրանց ազատորեն չեն արդթել, այլ կանխորոշված էր նրանց այդպես վարվելը: Եվ նա կարելիացնել, որ տվյալ օրվա եղանակը կարող է ըստ իր պատճառների հետ տարվել մինչեւ նյութի ստեղծման հենց սկիզբը, այնպես որ ամեն ինչ՝ թե՛ մարդկային, թե՛ նյութական, տրվել է ամենասկզբից: Մեզ համար իհարկե պարզ է, թե նա ինչ է ասելու, որ որոշալի եղանակ որոշալի արդթներն հարմարեցնելը ամբողջ հոգեւոր տիեզերքն ամբողջ մարմնական տիեզերքին հարմարեցնելու համընդհանուր խնդիր արտաքին կողմն է (նրա ընկալման ժամանակավոր վիճակի ինչ-որ պահին): Իր արարչությունն ամբողջության մեջ գործում է տարածության եւ ժամանակի ամեն պահի կամ, ավելի ճիշտ, մարդկանց գիտակցության կերպով նրանց ստի-

պում է առնչվել ամբողջական, հետեւողական արարչական գործողության հետ՝ որպես հաջորդական դեպքերի շարք: Թե ինչու է այդ արարչական գործողությունը տեղ թողնում նրանց ազատ կամքին, խնդիրների խնդիրն է, «սիրո» մասին թշնամու անհեթեթության հետեւում թաքնված գաղտնիքը: Թե դա ինչպես է կատարվում, խնդիր չէ բնավ. որովհետեւ թշնամին չի կանխատեսում մարդկանց ազատ գործողություններն ի նպաստ ապագայի, այլ տեսնում է, որ նրանց դա անում են իր անսահման կյանքի մեջ: Եվ, պարզ է, որ մարդուն մի բան անելիս տեսնելը նույնը չէ, ինչ նրան ինչ-որ բան անել տալը:

Կարող են մեզ պատասխանել, թե որոշ մարդ գործեր, ովքեր քիչը խթանում են ո՛չ իրենց գործերի մեջ, հատկապես Բոնեիտը, այս գաղտնիքը դուրս են հանել (Ակարկ Ե-2 դր. հոռետացի փիլիսոփա Բոնեիտի «Փիլիսոփայության միլիթարությունը» գրքի Ե մասին - Թրգմ.): Բայց այս մտավոր կլիմայում, որը մեք վերջապես կարողացել ենք ստեղծել ամբողջ Արեւմտյան Եվրոպայում, դու դա մասին մտահոգվելու կարիք չունես: Միայն կրթվածներն են կարողում հին գրքերը, իսկ մեք այնպես ենք արել, որ կրթվածները բոլոր մարդկանց մեջ ամենաքիչ հնաբանությունն ունենան այդ գրքերը կարգալու միջոցով խնամություն ձեռք բերելու: Մենք սրան հասել ենք մարդկանց մեջ ներշնչելով «պատմական տեսանկյուն»-ը: Եթե կարճ ներկայացնեմ, պատմական տեսանկյունը նշանակում է, որ երբ մի կրթված մարդ հանդիպում է մի հին հեղինակի գործում եղած որեւէ պնդման, երբեք չի հարցնում. «Արդյո՞ք սա ճիշտ է»: Փոխարենը հարցնում է, թե ո՛վ է ազդեցություն գործել այդ հին հեղինակի վրա եւ որքանով է այդ պնդումը համապատասխանում նրան, ինչ նա ասել է այլ երկրում, այդ հեղինակի զարգացման կամ ընդհանրապես մոնոպատմության ո՞ր փուլն է դա ներկայացնում, ինչպե՞ս է դա ազդել հետագա հեղինակների վրա, որքա՞ն հաճախ են նրան սխալ հասկացել (հատկապես այս կրթված մարդու գործը ընկերները), վերջին տասը տարիների ընթացքում այդ երկն ինչպիսի՞ ընդհանուր քննադատության է ենթարկվել, եւ ո՞րն է այս «խարցի վերաբերյալ ներկա դրությունը»: Համարել, թե հին հեղինակը գիտելիքի հնաբանի արդյունք է՝ անկախելով, թե այն, ինչ նա ասում է, հավանաբար կարող է փոխել մարդու մտքերը կամ վարքը, սա մերժվում է որպես ծայրագույն պարզամտություն: Եվ քանի որ մենք չենք կարող շարունակ խաբել ամբողջ մարդկային ցեղին, խիստ կարեւոր է յուրաքանչյուր սերունդ կտրել մնացած բոլորը, որովհետեւ ուր սովորելն ազատ տուրքառություն է ստեղծում սերունդների միջեւ, այնտեղ միշտ վտանգ կա, որ մեկին հատուկ սխալները կարող են շուկվել մյուսին հատուկ ճշմարտություններով: Բայց գոհություն է իմ Պորը եւ Պատմական տեսանկյուն, մեծ գիտականներն այսօր այնքան քիչ են սնվում անցյալից, որքան ամենատեղե մեխանիկը, ով Կոստահ է, որ «պատմությունն ապուշություն» է:

Զո սիրառատ քեզի՝

ԽԱՌՆԱԿՉԻ

Շարունակելի

Մկալերենից թարգմանությունը՝ Մ. Ս. Դ.

Տրասարակվել է

Մայր Աթոռ Սր Էջմիածնում (2015 թ.)



ԳԱՐԵՒՆ ՏԱՐԿՅԱՆ

ՄԱՐԿԻՏՈՆՍԿԻ
ՍՈՅՈՐ
ՈՒ
ԱՐՄԵՆԻԱՆԱԿԱՆ
ՇԵՐԿՈՒՄ

ՔԵՐՈՐՈՍՏՈՒՄՈՒՄ ՍՐ. ԳԵՄԱԼՅԱՆ - 2014

Ս. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ճարդագույն Պատրիարք եւ Ամենայն Յայր Կաթողիկոսի օրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել երջանակահիշատակ Գարեգին Ա Ամենայն Յայր Կաթողիկոսի «Քաղկեդոնի ժողովն ու Յայ Եկեղեցին» մենագրության ռուսերեն թարգմանությունը՝ կատարված է Կ. Կարգաչյանի կողմից, եւ Ս. Արեւշատյանի եւ Կ. Միրումյանի պատրաստած «Յայ միջնադարյան փիլիսոփայություն» ձեռնարկը:

Գարեգին Ա Յայրապետի «Քաղկեդոնի ժողովն ու Յայ Եկեղեցին» ատվածաբանական կարեւորագույն ուսումնասիրությունը Քաղկեդոնի ժողովի (451 թ.) եւ հայկական ավանդության հետազոտության, պատմաատվածաբանական վերլուծության անդրախի փորձերից է և շահեկան է հատկապես պատմական ու արդյունաբերական համակողմանի քննության ու վերլուծության, ինչպես նաեւ քաղաքական, եկեղեցական ու աստվածաբանական փաստերի համակարգվածության տեսանկյունից:

«Յայ միջնադարյան փիլիսոփայություն» ձեռնարկն ստեղծվել է հեղինակների «Յայր փիլիսոփայության պատմություն» աշխատության հիման վրա: Այստեղ փաստական հարուստ նյութի գիտատեսական եւ պատմաատվածաբանական համակարգային վերլուծության են ընդհանրացման համատեղատու մեթոդաբանական նոր հայեցակարգի լույսի ներքո ներկայացված է հին եւ վաղ միջնադարյան հայր փիլիսոփայությունը: Այս ուսումնասիրված ձեռնարկի հրատարակությունը կվիրված է Գեորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամյակին:

Գրքերը տպագրվել են մեկնաստությամբ՝ «Մարգիս Գաբրիելյան» հիմնադրամի:

Լրատվական կայքը՝

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՐԻ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵԼԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԱՄԵՆԱԿՆ ԶԱՅՈՑ ԲԱՆԱՍԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱԿՆ ԶԱՅՈՑ ԶՈՐԱԿԱՐԻ ԱՄԱՒՆ

Սկիզբը՝ էջ 6
Եվ ճշմարիտ ու իրավացի է բանաստեղծուհու այն դիտարկումը, թե մենք երազված էինք նրան դիմավորել նոր, գործող, ծաղկուն ու երջանիկ Յայաստանով, առողջ, հպարտ, բարեկեցիկ ժողովուրդով, «որություն» բառն իսպառ մոռացած կարմրաթուշ, ծիծաղկուն երեխաներով:

Սակայն այդպես չեղավ, այդպես էլ...
Ուստի, այդ պատճառով է, որ բանաստեղծուհին մեղմորեն շշուղում է. «Ների՛ր, Չորավար, որ այդպես չեղավ, այդպես չէ: Ների՛ր, որ այսօր տխուր է Յայաստանը, տխուր է քո ժողովուրդը, բեկված,

շփոթաբար, քանզի երկրի դեպի կանգնած այրերից ոչ բոլորը մտապահեցին քո խոսքերը. «Երբ իրկունը գլուխներդ բարձրին դնեք, որ քնանաք, մի քիչ մտածեք ձեր ազգի մասին... Աշխատեցեք, որ ապագա սերունդին ես ապագա պատմությունը լավ բան տաք ե ոչ թե անեծք»... Ների՛ր, նրանց էլ ների՛ր, Չորավար»:

Բանաստեղծուհին ցավով ու բողոքով այսպես, այս տոհմերով է դիմում հայոց Չորավարին. «Ների՛ր, որ ցտանք, մեզ թողեցին գտնել այն բարձունքը, այն միակ, միայն քեզ պատկանող ու քեզ արժանի սրբատեղին, ուր պիտի ամ-

փովվեր քո՝ Մեծ թափառակալի հոգևատարն մարմնով... Թեկուգե՛լ այդպես չեղավ, չգտնվեց այն միակ սրբազան բարձունքը, այնուամենայնիվ, Չորավարի վերադարձը հայրենիք ընկալվեց ու ընդունվեց որպես ազգային ու համազգային կարեւորություն բացառիկ մի իրադարձություն:

Ողջ հայությունն ու հայ ժողովուրդը Չորավար Անդրանիկին հոգեկան վերին աստիճանի պաշտով, պատվով ու վերադարձը ընդունել են ճանապարհից դեպի Եռաբլուրի բարձունքը:

Անդրանիկը միշտ ներկա է եղել մեր ժողովրդի երեկվա եւ

այսօրվա պատմական երթում եւ այդպես կլինի առիավետ: Ժողովուրդն ու իր մեծ Չորավարն անբաժան են միմյանցից: Թերեւս հենց այս տրամաբանությամբ են հրամայակալուն բանաստեղծուհին ամփոփիչ տույն միտքն է արձանագործում. «Բայց դու լավ գիտես, Չորավար, որ քեզ հետ է քո ժողովուրդը, որն ինչքան էլ դառնացած ու թեաքել, իր հոգում քեզ համար պահած մի մաքուր անկյուն ունի, մի մաքուր երկինք, որտեղ դու՝ մշտապես իրեն արժի՛կ սավառնել ու սավառնելու ես լեռ ու ծայր...»:

Սրմեն ԿԱՐԿԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԲՐԻՍՏՈՆԻԱՆ ԴԱՅԱՍԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադրվել է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Պատարակիչ՝

«Զրիստոնյա Յայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստուկ Ստամբուլյան
Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սր Էջմիածնի

Ֆեռալիստ՝ 517197

Էլ. փոստ՝ qsh@etchmidzin.am
astgh@etchmidzin@gmail.com

web կայք՝
kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 18.2.2015 թ.

Տպագրանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ